ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

11 մայիսի 2026 թվականի թիվ 88-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի թիվ 134 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 46-Ն որոշումով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2026 թվականի հիմնական միջոցառումների պլանի» 8.1.1 կետը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իմ ղեկավարությամբ Տավուշի մարզում 2026 թվականի մայիսի 26-ին անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը սողանքի դեպքում» թեմայով:
2. Նշանակել ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարարական ծառայության գնդապետ Հայկ Սաղաթելյանին:
3. Հաստատել ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն հավելված 1-ի:
4. Ուսումնավարժությանը ներգրավել՝

1) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովին,

2) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի ղեկավար կազմին և աշխատակիցներին,

3) Իջևան համայնքի և բնակավայրերի վարչական ղեկավարներին,

4) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչությանը,

5) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Իջևանի բաժնին,

6) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության 112 օպերատիվ կառավարման կենտրոնի ահազանգերի կառավարման վարչության Տավուշի բաժանմունքին:

5. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, փրկարարական ծառայության գնդապետ Հայկ Սաղաթելյանին՝

1) կազմակերպել ուսումնավարժության պլանավորող փաստաթղթերի ժամանակին մշակումը և հաստատումը համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանի,

2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանի,

3) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել մայիսի 25-ին:

6. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի տարհանման հանձնաժողովի նախագահին՝

1) ստուգել տարհնման հանձնաժողովի ընդունման և տեղաբաշխման կետերի պատրաստությունը: Ճշտել տարհանման և տեղաբաշխման համար օգտագործվող տրանսպորտի քանակը, տարհանվող բնակչության հաշվարկը ըստ բնակավայրի տեղաբաշխման,

2) ճշգրտել «Արտակարգ իրավիճակների դեպքում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի վտանգավոր տարածքներից մարզի բնակչության նյութական և մշակութային արժեքների տարհանման» պլանը,

7. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ուսումնասիրել «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության» պլանը և արտակարգ իրավիճակների ոլորտին առընչվող իրավական ակտերը,

2) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՄԱՐԶՊԵՏԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՏԵՂԱԿԱԼ Ն. ՂՈՒՇՉՅԱՆ

X

Ք. Իջևան
2026թ. մայիսի 11